ցան սմա և ոմանք 'ի վարդապետաց, և նորա եկեալ դադարեաց զաղմուկն, և նստաւ անդ ամս 3 և ամիսս 6· և ապա առաքեցաւ 'ի Նուիրակ յԵւդոկիա, ուր կատարեալ զպաշտօն իւր՝ դարձաւ անտի բարութեամբ եւ եհաս 'ի քաղաքն Ատանայ, ուր լուաւ զմահ Թէոդորոս Պատրիարքի, եւ զկտակ նորին վասն իւր· ընդ որ հաւանեալ միաբանաց գրեցին հանրագիր բաղմակնիք 'ի Կոստանդինուպօլիս։ Յակոբ Պատրիարք և Իշխանաւորք ազգին հանին զՊատրիարքական Պէրաթ նորին, և ինքն Կարապետ Եպիսկոպոս եհաս յԵրուսաղէմ զկնի Զատկին, նոյնպէս և նամականիք 'ի կայսերանիստ քաղաքէ 'ի ձեռն թղթատարի, եւ նստաւ Կարապետ յԱթոռ Պատրիարքութեան Երուսաղէմի· զայսոսիկ քաղեցաք 'ի կենսագրութենէ նորին՝ զոր ինքն գրեալ է։

Սահակ Կաթուղիկոս Էջմիածնի՝ ահաբեկ կոչեցեալ, անկեալ յիշխանութենէ Կաթուղիկոսութեան նստէր 'ի Կարին, ուր վախճանեցաւ իսկ (1763· 'ի 22 Փետրվարի)։ Իսկ Յակոբ Պատրիարք հանեալ գիր արքունուստ առաքեաց անդ զՍարգիս վարդապետ իւր բերել առ ինքն զստացուածս նորին։ Եւ 'ի մեռանիլ մեծի Վէզիրին՝ էանց 'ի տեղի նորա Նիշանճի Համզա Փաշա, որոյ եղեն վաճառապետք յազգէն Հայոց Ճանպազեան Յարութիւն, Սադայեան Մարտիրոս, և այլ ոմն Սարգիս անուն։ Եւ վաճառապետք առաջնոյ Վէզիրին, Պօղոս, Ղազար եւ Ասլան Ամիրայք ըմբռնեալ եդան 'ի բանտի՝ եւ մատնեցան 'ի գանս և 'ի տանջանս· դրաւեցան ինչք և ստացուածք նոցին յարքունիս, և 'ի վերջոյ Ղազար Ամիրայ կախեցաւ զիւյատէ, և երկոքեանն ազատեցան 'ի բանտէ (1763· 'ի 25 Մայիսի)։

Յաւուրս Պատրիարքութեան Կարապետի, յարեան ոմանք յազգականաց վախճանեալ միաբանաց Ս· Յակոբայ և պահանջէին զժառանգութիւնս նոցա, որպէս գրէ փոխանորդ Գրիգոր վարդապետն 'ի Կոստանդինուպօլսոյ։ Իսկ Կարապետ Պատրիարք գրեաց առ նա պատասխանի երկար բանիւք, յորում ձեռն արկեալ կնքեցին ամենայն միաբանք վանաց· զի խնամ կալցի ընդ Պատրիարքին եւ ընդ գլխաւորս ազգին, խափանել զայդպիսի սնոտի և վը-